

## ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ԷԶԵՐ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Ուրվագիծ Երուսաղեմահայ փայտագրության)

*Երանի ով ունի հիշադրակի Սիոն*

Երուսաղեմի հայկական փայտագրությունն կապվում է Սուրբ Երկրում հայերի 17-դարյա անընդմեջ ներկայությանը և գործունեությանը:

Երուսաղեմի հայ միաբանները, գրագրության զյուգից առաջ, Սուրբ Երկրի հայկական վանքերում ընդօրինակել են հազարավոր ձեռագրեր<sup>1</sup>:

Երուսաղեմի հայկական փայտարանը հիմնվում է՝ Պողոս վարդապետ Աղրիանապոլսեցու ջանքերով և Միաբանական ժողովի որոշմամբ 1832 թ.՝ «ի պարծանս ազգին հայոց»<sup>2</sup>: Իսկ գրագրությունը սկսվում է մեկ փարի անց: Նախաձեռնողը նույն է Զաքարիա Պատրիարք Տեր-Ղևիրոսյանը:

Նա ծնվել է՝ Հին Հարք կամ Բոլանուիսի (Տարոն) գավառի Կոփի ավանում: 1820 թ. Զաքարիան նվիրակ է եղել Դիաքոբերիում և Սասունում, հետո՝ Զմյուտնիայում, որպեսից 1826 թ. Կ. Պողի փոխանորդ է ընդունվում: 1829 թ. Զաքարիան դիմումնազիր է ներկայացնում տպարանին և նրանից ստանում երովարդակ, որով հայերին իրավունք է շնորհվում հոյների և լարիկների նման պատարագել Սուրբ Գերեզմանի վրա՝ հավասար իրավունքներով<sup>3</sup>: Տնօրինական սրբավայրերի հայոց եկեղեցական իրավունքի պաշտպանության այս նուանուն գործունեության համար նա 1830 թ. արսորվում է Կիպրոս, որպեսից կարողանում է 1831 թ. Երուսաղեմ անցնել և արսորից ազարվել արդեն պատրիարք դարձած Պողոս Աղրիանապոլսեցու միջնորդությամբ: Այսպեսից ուղևորվում է Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու:

Կիպրոսում եղած ժամանակ նա գրում է Տրիեստ (Իտալիա)<sup>4</sup> իր բարեկամ Զմյուտնիացի ներելի փաճառական Պետրոս աղա Ցուտովյանին և խնդրում, որ նա փայտարական մի մամուլ նվիրի Երուսաղեմի Սուրբ Վառոնին: Ցուտովյանը Երուսաղեմ է ուղարկում փայտարական մի սարք ու կապարն փառեր ու այլնայ նյութեր<sup>4</sup>: Այս ամենով հանդերձ, այդ շրջանում հնարավոր չի լինում սկսել գրագրությունը՝ լուսական մի շարք գործիքների բացակայության պատճառով:

Զաքարիան Երուսաղեմում պարդիարքական փոխանորդ նշանակվելուց հետո, 1832 թ., զնում է Եղիպատոս, որպես իր բարեկամ ակնցի մահվեսի Ալիքսան Եղիազարյանի օգնութ-

<sup>1</sup> Գալուստյան Շ., Հայագի սուրբեր, Երևան, 1997, 3-րդ երաժշտականություն, լ. 368:

<sup>2</sup> Միփթարյան Խ., Համաօփ Պատմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1867, լ. 131:

<sup>3</sup> Սավալանյան Տ., Պատմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, լ. 1019:

<sup>4</sup> Նշանյան Մ., Տպարան առաքելական Աթոռոյն Սրբոց Յակովլեանց Երուսաղեմի, Երուսաղեմ, 1933, լ. 3:

յամբ ձեռք է բերում վիմագրական մի մամուկ և այսպիս նախապարհասպուրյունները հելլական պրզիեւի կարգավորելով հաջողվում է դպրանը բացել<sup>5</sup>:

1833 թ. հունվարին դպրանը լույս է ընծայում հայերեն առաջին գրքույկը, որը կոչվում է «Տերքակ աղօթամալոյց վասն շերմեռանդ աղօթասիրաց որք կամ անձամբ կամ միքար ներկայանան ի Սուրբ Տօնութիւնական տիեզիսն Զքիսպոսի Ասպուծոյ մերոյ»: Կաջորդ դպրան, 1834 թ., լույս է դրեսում երկրորդ գրքույկը՝ «Վարդան Վարդապետի «Տեսութիւն Անքառամ ծանիկ մեծացուցէին»»-ը, քերականության մի ձեռնարկ և դպրանը Կոնդակներ<sup>6</sup>:

Տպարանի գործունեությանը խողընդուռում էր նյութական միջոցների պակասը: Այդ հարցը կարգավորելու և դրանից հետո վաճական վարժարան հիմնելու նպարակով Զաքարիան 1835 թ. Պողոս Պարքիարք Աղքիանապոլսեցու նախազահությամբ խորհրդականների ժողով է գումարում: Ժողովը լսելով դպրանի և վարժարանի անհրաժեշտության վերաբերյալ Զաքարիայի փակած բացարությունները՝ որոշում է գործը հասկապուն հիմքի վրա դնելու նպարակով մի կայուն դրամագրուխ հավաքացնել արդեն գոյություն ունեցող դպրանին և նոր բացվելիք վարժարանին, որի բացումը որոշ ժամանակով դանդաղում էր՝ կարող ուսուցիչների բացակայության պատճառով<sup>7</sup>:

Ս. Աթոռի «Քնիկ» միաբան Պողոս Աղքիանապոլսեցին մի քանի այլ անձանց և կրտսերի հետ միասին նրանց և իր նվիրաբերած գումարներով կայուն մի դրամագրուխ է հիմնում դպրանի և վարժարանի հասդարձման նպարակով՝ «ի պարծան Սրբոյ Վթուոյ և յօգուր ազգիս»: Այնուհետև ժողովը արձանագրում է. «Խսկ եթէ ոք ի յապազ պարքիարգաց եւ կառավարչաց եւ ի խորհրդականաց եւ այլ ոք իցէ խափանել ջանասցէ զուումնարանն եւ գրպագրապունն, այնպիսին ինքն պարփառոր լիցի առջի ահեղ արենին Զքիսպոսի»: Կարգած և սրորագրված է 1835 թ. 5 հունիսի, Ս. Երուսաղեմ<sup>8</sup>:

1836 թ. այս դպրանից լույս է դրեսում մեկ գիրք՝ 5-րդ դարի պապմիչ Եղիշեի «Մելքոնութիւն Տէրունական Հայր Մեր աղօթից եւ ճառը Խաչըլութեան, Թ-աղման և Յարութեան եւ Խրապ Միաննանց»-ը: Ս. Աթոռի դպրանից «Վայելուչ» դեմքրակով երաժշտական այս գործի առաջարանում ասվում է, որ այն դպրագրվում է ըստ Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի:

Զաքարիան լույս է ընծայում միջնադարյան հայ մատենագիրների գործերից Ներսես Լամբրոնացու «Խորհրդածությին Սուրբ Պատրարագի» (1842 թ., առաջին տպ.) և Հովհաննես Կաթողիկոս Դրասիանակերպցու «Հայոց պարմութիւնը» (1843 թ., առաջին տպ.): Երկու գրքերի առաջարաններում բացարկվում է հրաժարակիչ Զաքարիա Պատրիարքի նըպարակը՝ նոր սերնդին դասդիմական նախնյաց պարմության ողով<sup>9</sup> և անխաթար պահելու Հայոց եկեղեցական կարգերը և արարողությունները<sup>10</sup>:

<sup>5</sup> «Սիոն», 1979, լույս 150:

<sup>6</sup> Տարություն արքեպիսկոպոս, Համառոր պարմութիւն կամ ուղեցոյց սրբազն գուղեաց, Երուսաղեմ, տպ. Ս. Կալորյանց, 1888, լույս 135:

<sup>7</sup> Սամաւանյան Տ., Պարմութիւն Երուսաղեմի, Երուսաղեմ, տպ. Ս. Կալորյանց, 1931, լույս 988:

<sup>8</sup> Նշանակ Մ., Տարան առաքեական Աթոռոյն Սրբոց Յակովիանց Երուսաղեմ, Երուսաղեմ, 1933, լույս 4-5:

<sup>9</sup> Պարմագրութիւն Յովհաննու Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմ, տպ. Ս. Յակովիանց, 1843, լույս 1:

<sup>10</sup> Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւն Սրբազն Պատրարագի, Երուսաղեմ, տպ. Ս. Յակովիանց, 1842, լույս 1:

Չարարիային հաջորդում է Կիրակոս Երուսաղեմացին (1847), որը լինելով իր նախորդի գործակիցը և գաղափարակիցը՝ շարունակում է ծավալել փապազրական գործը: Կիրակոս Պատրիարքը Զմյուռնիայից Երուսաղեմ է հրավիրում Մեսրոպյան վարժարանի նախկին աշակերդ, Էութեմիշ քաղաքի ազգային վարժարանի ուսուցիչ Տիգրան Սավալանյանին: Նա իր ժամանակի լավագույն մբավորականներից և ուսուցիչներից մեկն էր: 1848 թ. Սավալանյանը սփանձնում է վարժարանի դեսչությունը և փապազրվելիք գրքերի սրբազրության գործը, իսկ 1850 թ. նա սփանձնում է Պատրիարքարանի քարտուղարի պարտականությունը<sup>11</sup>: Ս. Աթոռի փապարանից Սավալանյանի հսկողությամբ և ղեկավարությամբ առաջին անգամ հրապարակվում են Լաբունայի, Մարթենս Ռուհայնցու, Միխայիլ Ասորու Պատրիարքությունները, Եփրեմ Ասորու «Գիրք Աղօթից»-ը (1848), Պետրոս Աղամայյան Բերդումյանցի «Մեկնութիւն Թղթոյն Պողոսի առ Եփեսացիս» (1850), որը փապազրվել է բնագրի հիման վրա և, ըստ հրապարակի՝ հազվագյուտ է իր դեսակի մեջ<sup>12</sup>:

Որպես ուսուցիչ Սավալանյանը մեծ նշանակություն էր դալիս պարանիների բարոյական դաստիարակությանը: Նրա հսկողությամբ լույս են դնեսել բազմաթիվ գրքեր այդ նրա պապակով, ինչպես, օրինակ, Պողոս Էութեմիշցու ««Նայելի Վիրաց, յորում ցուցանին յոռութիւնք եօթանց մահացու մեղաց» (1852), «բազմարդին և մեծիմասսպ» հեղինակ Գրիգոր Փեղրմալճյանի «Տրամաբանութիւնն կամ արունեսք բանական» գործը ձեռագիր օրինակի հիման վրա (1854), որը փապազրվում է «քաջ զիփելով զկարեւորութիւն կրթութեան կամաց և իմաստութիւն մերաց»:

Տպարանի աշխարհանքի համար հարկապես արգասաքեր են լինում Եսայի Պատրիարքի պաշտոնավարության վարինները (1864-1885): Տարեկան հրապարակվում են 10-16 գիրք: Գրքերի ցանկը բազմարովվանդակ էր՝ կրոն, պարմություն, բանասիրություն, իմաստասիրություն:

Եսայի Պատրիարքը 1867 թ. Ս. Աթոռու է հրավիրում Գարեգին (Մելքիսեդեկ) Մուրադյանին, որը նպաստում է փապազրական գործի կ'ավելի զարգացմանը<sup>13</sup>:

Երուսաղեմի բազմադարյան Աթոռի համար մի նոր շրջան է սկսվում Եղիշե Պատրիարք Դուրյանի պաշտոնավարությամբ (1921-1930)<sup>14</sup>: Դուրյան Պատրիարքը 1925 թ. վերահրապարակում է: «Սիոն» ամսագիրը, որը դադարել էր լույս դնենել 1877 թվականից: Դուրյանի գալսդյամբ վանքի պարմության մեջ հոգեմիտավոր լայն շարժում է ծավալվում, որից անմասն չի մնում նաև փապարանը. հրապարակվում են հայ միջնադարյան մատենագրության անդիմաց գործերից, Հայ Եկեղեցու դասանարանական և պարմական հիշարակարաններից, դպրոցական դասագրքեր:

Եփրազյում փապարանի զբանացրած փարածքը և հնարավորություններն ավելի են մեծացել նվիրագությունների շնորհիվ: Տպարանը հիմնադրման օրից ունեցել է իր բարերարները, որոնց թողած կրակներով փապազրվել և հրապարակվել են բազմաթիվ գրքեր:

<sup>11</sup> Սավալանյան Տ., Կևսապրական յուշեր, Գահիրե, 1900, լ. 43:

<sup>12</sup> Աղամայյան Պետրոս, Մեկնութիւն թղթոյն Պողոսի առ Եփեսացիս, Երուսաղեմ, դպ. Ս. Ցակովիրնանց, լ. 2:

<sup>13</sup> Մուրադյան Ա., Բարձր հոգեմիտականներից մեջ (Խ. Արույշակի անվան ՇՊՄ գիր. աշխ. մողովածու, հիմ. 2), Եփեսան, 2002, լ. 220:

<sup>14</sup> «Սիոն», 1930, լ. 101:

Նրանց թվում են այնքափի Շովանի սարկավագ Աշճյանը (Ներսես Լամբրոնացու «Խորհրդագություն» Սուրբ Պատարագի», 1842), սերասրացի մահկրեսի Տերպապյանցը (Տարբեք Իմաստասիրությանց Մելքիորա, 1852), ալեքսանդրացի Արքահամ փաշա Բարեռողը և Պողոս Բեյ Աշօյանը (Աստվածապուր Եպիսկոպոսի Երուսաղեմի ժամանակագրական Պարմությունը, 1890), Պողոս Նորբար Փաշան (Մադարիա Օրմանյանի «Ազգապարում»-ի Գ հատորը, 1927) և ուրիշներ: Այդ գործընթացը շարունակվում է նաև այսօր:

Երուսաղեմի հայոց միաբանությունը 1933 թ. Ուսումնական խորհրդի որոշմամբ շրջով նշեց Սրբոց Հակոբյանց տպարանի հարյուրամյա հորելյանը: Այս առթիվ մաքուցված գոհարանական Ս. Պատարագի ժամանակ Պատրիարք Թորգոն արքեպիսկոպոս Գոշակյանն օրինությամբ է հիշում տպարանի հիմնադիրին, տպարանի գարգացմանը և բարգավաճմանը նպաստած բարերարներին և նշում, որ տպարանի նպատակն է եղել ազգի կրոնական և ազգային հաստիարակության օժանդակելը և Նայ Եկեղեցու պաշտամունքային գրականության հրադարանկումը և ուխտավորների հոգևոր միխթարության գործը: Թորգոն Պատրիարքը հապուկ նշում է, որ այս տպարանում հրադարակված գրքերի մեջ երբեք չի եղել այնպիսին, որը «հետավոր կամ մոփիկից շոշափած լիներ անմաքուր գրականության իմաստներ»<sup>15</sup>:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանի հրադարակած առաջին գրքերը կրոնական ու ծիսաբարողական էին: Ժամանակի ընթացքում, սակայն, տպագրվող գրականությունը դառնում է բազմաթվանդակ: Գնալով հաճախ են տպագրվում պարմական, բանասիրական, իմաստասիրական, մեկնողական գրքեր ինչպես հայ հեղինակների, այնպես էլ՝ թարգմանական<sup>16</sup>:

1833 թվականից մինչ այժմ տպագրված գրքերն ըստ բնույթի կարելի է բաժանել հինգ հիմնական խմբի՝ կրոնա-ծիսական-ժամապաշտական, պարմական, բանասիրական, գիտական, իմաստասիրական:

Այսպիսով, 1832 թ. Զաքարիա Կոփեցին՝ տպարանի բուն հիմնադիրը, Պողոս Աղրիանապուտեցին՝ որպես հովանակոր, և Կիրակոս Երուսաղեմացին՝ իրև Զաքարիայի գաղափարակից և գործակից, երեք միասին հիմնադրեցին Երուսաղեմի հայոց Պատրիարքության տպարանը, որն անխափան գործում է ավելի քան 170 տարի:

<sup>15</sup> «Այլոն», 1933, նոյ., լ. 428:

<sup>16</sup> Օգտվել ենք Նայաստանի Ազգային գրադարանի ֆոններում գտնվող Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանի հրադարակած գարբեսքու գտարիների գրացուցակներից: